Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի
2018 թ. դեկտեմբերի 28 -ի N 506 - Ա
որոշման

# Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր
## «ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՐՑԱԽԻ ԵՎ ՋԱՎԱԽՔԻ ՀԱՅՐԱՔՈՒՐԿ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միության աջակցությամբ օգնել ՀՀ մարզերի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին՝ տարեկան երկու անգամ տրամադրելով դրամական հատկացումներ, մեղմել սոցիալական լարվածությունը և նպաստել աղքատության կրճատմանը: Ներկայումս ծրագրում ընդգրկված են 600 երեխաներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | Հայ օգնության ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միություն, ամերիկահայ ընտանիքներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ՝ 02517115 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ մարզեր, Արցախ և Ջավախք:<br>Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 72 704 000 դրամ,<br>որից՝<br>դրամական օգնություն 67 054 000 դրամ<br>կազմակերպական ծախսեր 5 650 000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի մարզերում, Արցախում և Ջավախքում բնակվող 600 |

| | | |
|---|---|---|
| | | հայրազուրկ՝ մինչև 18 տարեկան երեխաներ՝<br>Սյունիքի մարզից 268<br>Շիրակի մարզից 129<br>Տավուշի մարզից 69<br>Երևանից 18<br>Արցախից 42<br>Ջավախքից 74 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2019 թ. – 31.12.2019 թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Դրամական օգնությունը տրամադրվում է տարին երկու անգամ: Ընդհանուր գումարը՝ 67 054 000 դրամ:<br>2. Հայ Առաքելական Եկեղեցու թեմերի հոգևոր սպասավորների հետ համատեղ շահառու երեխաների մկրտության արարողությունների իրականացում: Ծախսեր չեն նախատեսվում:<br><br>Շահառուների ընտրությունը կատարվում է նրանցից ստացված դիմումների հիման վրա՝ համագործակցելով տեղական իշխանությունների և եկեղեցու թեմերի հետ, ինչպես նաև տնայցերի հիման վրա:<br><br>Կազմակերպական ծախսեր՝ 5 650 000 դրամ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 72 704 000 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալվում է ԱԱՀ-ից ազատում 01.01.2019 թ.-31.12.2019 թ. ընթացքում 250 000 դրամի չափով էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների համար, պայմանագիր N 2017/601 կնքված 14.06.2017 թ. «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի (ք. Երևան 0015, Արգիշտի 4/1, ՀՎՀՀ 01551651) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի (ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ՝ 02517115) միջև:<br><br>Ակնկալվում է ԱԱՀ-ից ազատում 01.01.2019 թ.-31.12.2019 թ. ընթացքում 2 000 000 դրամի չափով ավտոմեքենայի վառելիքի ձեռքբերման համար, |

| | | |
|---|---|---|
| | | պայմանագիր N 188՝ կնքված 16.11.2018 թ. «Ֆլեշ» ՍՊԸ-ի (ք. Երևան, Կողբացու 30, ՀՎՀՀ՝ 01808789) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի (ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ՝ 02517115) միջև:<br><br>Ակնկալվում է ԱԱՀ-ից ազատում 01.01.2019 թ.-31.12.2019 թ. ընթացքում 1 000 000 դրամի չափով գրասենյակային պիտույքների ձեռքբերման համար, պայմանագիր՝ կնքված 13.11.2018 թ. «ԱԷՌԱ ԿԱՆՑ» ՍՊԸ-ի (ք. Երևան, Կորյունի 8/22, ՀՎՀՀ՝ 01544734) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի (ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ՝ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 5 650 000 դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 7.8 %-ը:<br>Ծրագրի սպասարկումը ներառում է՝<br>ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2 400 000 դրամ<br>կապի ծառայություն 250 000 դրամ<br>ավտոմեքենայի վառելիք 2 000 000 դրամ<br>գրասենյակային պիտույքներ 1 000 000 դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝<br>1. ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի,<br>2. ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության,<br>3. Տեղական ինքնակառավարման մարմինների,<br>4. Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան, Շիրակի, Սյունիքի, Տավուշի և Վիրահայոց թեմերի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի |

| | | |
|---|---|---|
| | | 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ